# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-2025/16-9-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ապրանքային նշանը | մակնիշը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | DGN; Electrolab | DGN-II; EFT-01; ETD-1020X; EV-02 | • Դեղագործական բազմաֆունկցիոնալ R&D Համակարգ Ամբողջական համակարգ՝ նախատեսված դեղագործական գիտահետազոտական աշխատանքների համար։ Համակարգը ներառում է՝ 1. Հիմնական շառժիչ - 2 հատ Ներառում է հպումային էկրան և PLC կառավարման համակարգ, ինչը դարձնում է վերահսկումը ավելի պարզ և հարմար: Աքսեսուարները պատրաստված են 316L չժանգոտվող պողպատից և ամբողջությամբ համապատասխանում են GMP ստանդարտներին: Տեխնիկական տվյալներ՝ Լարումը: 220Վ Հզորությունը: 0.55կվտ Չափերը: 580x500x600մմ Շարժման արագությունը: 0-120 պտ/րոպե Քաշը: 85kg Ժամանակի կոնտրոլ: Ժամ, րոպե, վայրկյան Ծավալը՝ 10լ 2. Հիմնական շարժիչի այլ անհրաժեշտ կցամասեր -2 հավաքածու 3. Օսցիլացիոն գրանուլյատոր, 304 մաղով-1 հատ Կիրառվում է հատիկավոր պինդ նյութերը անհրաժեշտ մաղերի միջով անցկացնելու համար, առավելագույն արտադրողականությունը՝ 30կգ/ժ (կախված նյութից և ցանցերի չափերից): Օսցիլացնող գրանուլյատորը ապահովված է երկու ստանդարտ մաղերով՝ ցանցի անցքի չափսերը 1.0 մմ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | և 1.5 մմ: Մաղի նյութը` 304 չժանգոտվող պողպատ: Լրացուցիչ մաղեր` 2.0 մմ, 2.5 մմ անցքի չափերով: 4. Միա կոնային խառնիչ 10լ.- 1 հատ Օգտագործելով նորագույն դիզայնի մոտեցումներ, ստեղծում է ավելի արդյունավետ բազմաչափ շարժման էֆեկտներ` ավելի լավ խառնում ապահովելու համար: Այս սարքը լայնորեն կիրառվում է փոշե նյութերի խառնման համար: Պատրաստված է 316L չժանգոտվող պողպատից և ամբողջությամբ համապատասխանում է GMP ստանդարտներին: 5. Ծածկութապատման սարք, միացման պարագաներով-1 հատ: Ծածկույթապատման սարքը ապահոված է բոլոր տեսակի ծածկույթապատման կաթսաները միացնելու, կաթսայի աշխատանքային անկյան կարգավորման հնարավորությամբ, ինչը թույլ է տալիս օպերատորներին ապահովել ծածկույթապատման բարձր որակ: Մաքսիմալ ծավալը` 10լ, տարողությունը` 1-3կգ, որը կախված է ծածկույթապատվող նյութի հատկություններից, գործիքի և գործընթացի պարամետրերից: Ծածկութապատման կաթսան պատրաստված է 316 չժանգոտվող պողպատից: Ծածկութապատման կաթսայի չափերը - Φ310*190 մմ 6. V- աձև խառնիչ-1 հատ V- խառնիչը պատրաստված է ասիմետրիկ անկյան տակ միմյանց միացված երկու գլանից, ինչը նպաստում է նյութերի լիարժեք խառնմանը` առանց անկյուններում խառնվող նյութերի կուտակումների: Մաքսիմալ ծավալը` 10լ: Աշխատանքային հզորությունը կախված է հատկություններից բնույթից և գործընթացի պարամետրերից: Պտտման արագություն 0-120 r/min: Չափսը` 530*400*170 մմ 7. Բազմակի ուղղություններով խառնիչ-1 հատ Բազմակի ուղղություններով խառնիչի գնդաձև տակառը սիմետրիկորեն ամրացված է պտտվող շրջանակի վրա, որը պատրաստված է չժանգոտվող պողպատից: Շարժիչի շփվող հատվածը` օրգանական ապակուց: Խառնիչը ապահովում է նյութերի եռաչափ շարժում: Ընդհանուր ծավալը` 10լ: Աշխատանքային հզորությունը կախված է հատկությունների բնույթից, գործիքի և գործընթացի պարամետրերից: 8. Խորանարդաձև խառնիչ-1 հատ Խառնիչ, որն ապահովում է եռաչափ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | շարժում՝ նպաստելով նյութերի համասեռ խառնմանը: Խառնման ինտենսիվության բարձրացման համար խորանարդաձև խառնիչի խորանարդի մեջ յուրահատուկ ձևով տեղադրված են երեք ձող: Սարքը հատկապես հարմար է զգայուն և ամուր նյութերի խառնման համար: Միացնող մեխանիզմը թույլ է տալիս փոփոխել խառնման անկյունը, որը կարող է լինել 0 ~ 75°՝ խառնման գործընթացի ինտենսիվությունը բարձրացնելու կամ նվազեցնելու համար: Արտադրանքի հետ շփվող հատվածը՝ օրգանական ապակուց: Ընդհանուր ծավալը՝ 10լ: Աշխատանքային հզորությունը կախված է խառնման ենթակա նյութերի բնույթից, գործիքի և գործընթացի պարամետրերից: Չափսը՝ 290*290*280 մմ 9. Կրկնակի կոնային խառնիչ-1 հատ Կրկնակի կոնաձև խառնիչն օգտագործվում է բոլոր ազատ հոսող փոշիների և հատիկների համար: Աշխատանքի ընթացքում այն առաջացնելով արագ բազմաչափ շարժում նպաստում է կատարյալ խառնուրդի ստացմանը: Ընդհանուր ծավալը՝ 10լ: Աշխատանքային հզորությունը կախված է խառնման ենթակա հատկություններից, գործիքի և գործընթացի պարամետրերից: Պտտման արագություն 0-120 r/min Չափսը՝ 360*330*300 մմ 10. Z – աձև կանալային խառնիչ-1 հատ Z – աձև կանալային խառնիչը բաղկացած է ակոսային տարայի մեջ տարբեր անկյուններով պտտվող Z-աձև ձողով և օրգանական ապակուց պատրաստված կափարիչով: Այն պատրաստված է չժանգոտվող պողպատից և շատ լավ խառնում է նյութերը: Հեշտ է բեռնաթափվում և մաքրվում նույնիսկ հոսանքազրկումից հետո, քանի որ ամբողջ կոնտեյները կարող է պտտվել 180 աստիճանով: Ընդհանուր ծավալը՝ 10 լ: Աշխատանքային հզորությունը կախված է խառնման ենթակա հատկություններից, գործիքի և գործընթացի պարամետրերից: Չափսը՝440*210*220 մմ 11. Հարիչ-1 հատ Հարիչը կարող է խառնել բարձր և ցածր մածուցիկությամբ բոլոր տեսակի հեղուկները: Կոնտեյները և հարիչը պատրաստված են չժանգոտվող պողպատից: 12. Թափահարման մաղային համակարգ -1հատ Թափահարման գործողությունը ռիթմիկ շառժումների |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | շնորհիվ ստիպում է հատիկավոր նյութերն ու փոշին անցնել ցանցային մաղի միջով՝ ապահովելով մասնիկների չափերի համապատասխան ընտրություն: Սարքավորումը հագեցած է տարբեր չափսերի ցանցային մաղերով ՝ տարբեր չափերի մասնիկների համար: 13. Դեղահատավորման մամլիչ մեքենա-1 հատ Մշակված է ժամանակակից տեխնոլոգիաների հիման վրա, լայնորեն կիրառվում է դեղագործական, լաբորատոր և այլ ոլորտներում: Այն նախատեսված է փոշիների և հատիկավոր նյութերի հաբերի վերածման համար՝ շարունակական և ավտոմատ եղանակով ունի ողջամիտ կառուցվածք, հարմարավետ շահագործում և փոքր չափսեր: Լցոնման խորությունը և հաբի հաստությունը հնարավոր է շարունակաբար կարգավորել: Ամբողջությամբ համապատասխանում է GMP ստանդարտին: Նորարարական դիզայնը ապահովում է ավելի անվտանգ և ստանդարտացված արտադրական գործընթաց: Արտադրողականություն: 3600 հաբ/ժ Առավելագույն ճնշում: 50կՆ Հաբի առավելագույն տրամագիծ: 25մմ Լցոնման խորություն: 20մմ Հաբի առավելագույն հաստություն: 8 մմ Հզորություն: 220վ, 50hg, ոչ ավել 1.5կվտ Չափսեր: 550x600x900մմ • Լցնովի խտության թեստավորման համակարգ Նախատեսված է փոշիների և հատիկավոր նյութերի լցնովի խտությունը որոշելու համար՝ համապատասխանելու USP և ASTM ֆարմակոպեայի պահանջներին: մեթոդներ՝ USP 1 and USP 2 • USP 1: բարձրության անկում՝ 14 մմ ± 2 մմ, 300 հարված: • USP 2: բարձրության անկում՝ 3 մմ ± 0.2 մմ, 250 հարված: Երկու փորձարկման կայան՝ 100մլ և 250մլ գլանակներով: • LCD էկրան. 24x2 թվային: • Տպիչի միացում. RS232: • Գլանակների ամրակներ. Snap-lock մեխանիզմ՝ տեղադրման հարմարության համար: • Կառույցի նյութ. Փոշեներկած պողպատ (MS) կամ չժանգոտվող պողպատ (SS): Ապակե գլանակ, 100 մլ, \"Ա\" դաս, սերտիֆիկատով: Ապակե գլանակ, 250 մլ, \"Ա\" դաս, սերտիֆիկատով: 100 մլ գլանակի համար Snap-lock մեխանիզմով ամրակ: 250 մլ գլանակի համար Snap-lock մեխանիզմով ամրակ: Ձայնակլանիչ խցիկ: • Լցնովի խտության թեստեր (Սկոտի Վոլյումետր) • |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Концерн-Энергомаш ЗАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵԱՃԱՊՁԲ-2025/16-9-ԵՊԲՀ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | товарный знак | марка | технические характеристики |
| 1 | | | Համապատասխանում է USP, Ph. Eur և ASTM պահանջներին: • Չափում է մանրախիճ փոշիների և նմանատիպ նյութերի նստեցված խտությունը: • Թույլ է տալիս հեշտությամբ հաշվարկել խտությունը գ/մլ-ով: • Օգտագործվում է փոշու հոսքի ինդեքսի հաշվարկման համար: • Հատուկ զսպանակավոր մեխանիզմով ամրացվող սպաթուլան պահում է սեղմակը ուղղահայաց դիրքում՝ հեռացնելով ավելորդ փոշին և կանխելով դրա կուտակումը: Սարքը պատրաստված է չժանգոտվող պողպատից Վերին ծածկը/նյութ: Ցանցային ֆիլտր՝ 16 mesh; Մետաղալարի տրամագիծ՝ 0,56 մմ; Բացվածք՝ 1,03 մմ Տարանջատիչ/նյութ: 4 հատ / պատյանի; Տարանջատիչի պատյան / նյութ՝ 45 մմ × 45 մմ / չժանգոտվող պողպատ Ստորին ծածկը: Նյութ՝ չժանգոտվող պողպատ Ընդունիչ բաժակի պարամետրեր: • Գլանակի ծավալ. 25,00 մլ ± 0,05 մլ • Ներքին տրամագիծ. 30,00 մմ ± 2,00 մմ • Կուբի ծավալ. 16,39 մլ ± 0,2 մլ (1,000 դյույմ³ ± 0,003 դյույմ³) • Կուբի չափեր. 25,4 մմ ± 0,076 մմ Սարքի հենակ: • Հորիզոնական հիմք, որը չունի թրթռումներ և ունի ներկառուցված մակարդակաչափ • Փոշիների հոսքունեւթյան չափման համակարգ • Համապատասխանում է USP և EP պահանջներին: • Ձագարներ՝ 10 մմ, 15 մմ, 25 մմ անցքերով: • Հնարավոր է պատրաստել ձագարներ ոչ ստանդարտ անցքերով: Նպատակ Թեստերը նախատեսված է փոշիների և հատիկների հոսունության ցուցանիշի և բնական անկման որոշման համար՝ նպատակ ունենալով վերահսկել սփռվող նյութերի որակը: Սարքը մշակվել է լիարժեք համապատասխանությամբ ԱՄՆ (USP <1174>) և Եվրոպական (EP <2.9.36>) ֆարմակոպեայի հոդվածներին: Այն ձեռքի սարք է, որն իր մեջ ներառում է հարթակ՝ կոնով և ձագարով, որտեղ տեղադրվում է նախապես կշռված փորձանմուշը: Սարքը միաժամանակ բացում է ելքի ծորակը և միացնում ժամանակաչափ: ժամանակաչափը կանգ է առնում, երբ ամբողջ փորձանմուշը հոսում է կոնից: EP <2.9.36>-ի պահանջների համաձայն՝ սարքը համալրված է 10 մմ, 15 մմ և 25 մմ տրամագծով ծորակներով: Բնական անկման անկյունը հաշվարկվում է թվային բարձրաչափի միջոցով: |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Առանձնահատկություններ • Հոսունության չափման կրկնվող արդյունքներ: • Բնական անկման անկյան պարզ հաշվարկ: • Համապատասխանում է USP <1174> և EP <2.9.36> պահանջներին: • 5 մմ, 10 մմ, 15 մմ և այլն տրամագծով ծորակներ: • Հոսունության ինդեքսի որոշում՝ 4-ից 40 սանդղակի վրա և անկման անկյան չափում: Փոշիների և հատիկների հոսունության թեստը մատակարարվում է օգտագործման պատրաստ վիճակում՝ ներառյալ հետևյալ բաղադրիչները՝ • Պլատֆորմ: • Կոն: • 10 մմ, 15 մմ և 25 մմ տրամագծով ծորակներ: • Փոշու հավաքման սկավառակ: Պարտադիր պայման է Տեղափոխում, տեղադրում, ուսուցում և կարգաբերումը մատակարարի կողմից և մատակարարի միջոցներով: Մատակարարը պետք է ներկայացնի արտադրողի լիազորագիրը՝ սարքը մատակարարման համար: Հավաքածուի մեջ ներառված բոլոր բաղադրիչները պետք է համատեղելի լինեն միմյանց հետ և մատակարարը պարտավոր է իրականացնել վերը նշված համակարգերի տեղադրումը և գործարքումը որպես մեկ ամբողջական միասնական աշխատող R&D համակարգ: Սարքը պետք է լինի նոր, չօգտագործված: Երաշխիքային ժամկետ՝ 12 ամիս: |